ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՀՈՒՆԻՍԻ
2026 թ.
№ 11 (1166)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ՀՊՄՀ
Հիմնադրված 1922

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ». ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆԸ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԷՐ

Հունիսի 26-27-ը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՊՄՀ Մետափիլիսոփայության, փաստարկման և հայագիտության միջազգային ինստիտուտի, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային դաշնության (FISP) և Ամերիաբանկ ՓԲԸ-ի նախաձեռնությամբ անցկացվեց «Կրթությունը և փիլիսոփայությունը» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ծննդյան 100-ամյակին:

Գիտաժողովին մասնակցում էին Փիլիսոփայական ընկերությունների միջազգային դաշնության (FISP) նախագահության անդամներ, նշանավոր փիլիսոփաներ աշխարհի տարբեր երկրներից, կրթական ոլորտի ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Լիագումար նիստում ելույթ ունեցավ ակադեմիկոս Գեորգ Բրուտյաի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, Մետափիլիսոփայության, փաստարկման և տրամաբանության միջազգային ինստիտուտի տնօրեն, ՀՊՄՀ Հայոց փիլիսոփայության ակադեմիայի նախաաաաագահ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հասմիկ Հովհաննիսյանը:

Նա ողջունեց «Կրթությունը և փիլիսոփայությունը» խորագրով միջազգային գիտաժողովի հյուրերն ու մասնակիցներին, որոնք եկել են մասնակցելու 20-21-րդ դարի նշանավոր փիլիսոփա, ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցելու:

«Մեծ պատիվ է այսօր համախմբված տեսնել փիլիսոփայական գիտական հանրության ներկայացուցիչներին այս գիտաժողովում, որը ոչ միայն հարգանքի տուրք է, այլև կարևոր հնարավորություն վերաիմաստավորելու կրթության փիլիսոփայության դերը ժամանակակից աշխարհում,-ասաց Հասմիկ Հովհաննիսյանը:-Այսօր էլ Գեորգ Բրուտյանը շարունակում է ներկա լինել իր մտքերով, գաղափարներով, գիտական դպրոցով և ամենից առաջ իր սաներով ու հետևորդներով:

Մինչև 21-րդ դարի 20-ական թվականները Գեորգ Բրուտյանը Հայաստանի միակ փիլիսոփան էր, որը պարբերաբար մասնակցում էր փիլիսոփայական ընկերությունների միջազգային դաշնության համաշխարհային կոնգրեսներին: Սակայն այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ այդ տեսլականը շարունակություն ունի: 1923 թվականին Հայոց փիլիսոփայական ակադեմիան դարձավ FISP-ի անդամ, 2024 թվականին Հռոմում կայացած 25-րդ համաշխարհային փիլիսոփայական կոնգրեսում Հայաստանը հանդես եկավ առանձին մասնաճյուղով, որտեղ զեկուցումներով ներկայացավ Հայաստանի 11 փիլիսոփա»:

Հասմիկ Հովհաննիսյանը վստահորեն փաստեց՝ այսօր հայկական փիլիսոփայական միտքը ավելի տեսանելի ու ներկայացված է միջազգային հարթակներում, ապա վստահեցրեց՝ եթե այսօր իրենց ուսուցիչը այս դահլիճում ներկա լիներ, գոհունակությամբ կարձանագրեր, որ իր հիմնադրած ավանդույթները ոչ միայն պահպանվել են, այլև դարձել են շարունակական զարգացման հիմք միջազգային համագործակցության, նոր սերնդի ներգրավվածության և նոր գաղափարների իրականացման միջոցով:

Միջազգային գիտաժողովի բացման առթիվ մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Մկրտչյանը:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը նկատեց՝ գիտաժողովը աշխարհի տարբեր երկրներից ժամանած հեղինակավոր փիլիսոփաներին, գիտնականներին, կրթության ոլորտի ներկայացուցիչներին միավորել է մեկ կարևոր կարևոր նպատակի շուրջ՝ վերաիմաստավորելու կրթությունը, փիլիսոփայության փոխհարաբերությունները և արժևորելու Գեորգ Բրուտյանի գիտական ժառանգությունը:

Նա ընդգծեց՝ մեծ գիտնականի գործունեությունը վաղուց դարձել է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային գիտական մտքի անբաժանելի մասը՝ թվարկելով նրա գործունեության շրջանակներն ու ուղղությունները. նրա անունը անխզելիորեն կապված է փիլիսոփայության, տրամաբանության, փաստարկված տեսության և գիտության մեթոդաբանության զարգացման գործին, նրա անունը կապված է բազմատրամաբանության հայեցակարգի, հայագիտական դպրոցի, տեսության բրուտյանական հայեցակարգի և փաստարկման երևանյան դպրոցի ստեղծման հետ:

«Բրուտյանի ժառանգությունը միայն գիտական տեսություններով չի սահմանափակվում, նա կրթության և գիտության կամակերպման բացառիկ գործիչ էր, որը տասնամյակներ շարունակ ձևավորել է գիտական մտածողության մշակույթ, նպաստել երիտասարդ հետազոտողների կայացմանը և գիտական դպրոցների ձևավորմանը»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ առանձնահատուկ հպարտության առիթ է, որ վերջինս իր գիտական ներուժն ու փորձը կապել է հենց Մանկավարժական համալսարանի հետ՝ հիմնելով և ղեկավարելով Մետա-

➤2

1

փիլիսոփայության, փաստարկման և հայագիտության միջազգային ինստիտուտները:

«Գեորգ Բրուտյանի գործունեությունը մեծ ազդեցություն է ունեցել համալսարանի գիտական կյանքի միջազգայնացման և ակադեմիական հեղինակության ամրապնդման

գործում: Այսօր, երբ աշխարհը կանգնել է արագ փոփոխությունների, տեխնոլոգիական վերափոխումների և արժեքային նոր մարտահրավերների առջև, կրթությունը առավել քան երբևէ կարիք ունի փիլիսոփայական խորության, քննադատական մտածողության և պատասխանատու երկխոսության մշակույթի»,-ամփոփեց Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ այս արժեքներն է իր ամբողջ կյանքում պաշտպանել, զարգացրել և առաջ տարել Գեորգ Բրուտյանը:

Ելույթ ունեցան և Գեորգ Բրուտյանի գործունեությունը նորովի արժևորեցին ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահության անդամ, ԵՊՀ փիլիսոփայության տեսության, պատմության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալեքսան Բաղդասարյանը, Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Արմեն Մարսուպյանը, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային դաշնության փոխնախագահ, Եվրոպական հետազոտական տարածքի ամբիոնի ղեկավար, Հայաստանի ամերիկյան համալսարանի հանրային հարցերի էթիկայի կենտրոնի տնօրեն Մարիա Բաղրամեանը, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային դաշնության նախկին նախագահ Լուկա Մարիա Սկարանտինոն, Գեորգ Բրուտյանի դուստր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Բրուտյանը:

Ելույթ ունեցողներն ընդգծեցին՝ «Նա մեծ ու ծանրակշիռ ավանդ է ունեցել փիլիսոփայական գիտության զարգացման գործում». «Պատմությունը չպետք է մոռանա մեծություններին», «Նա փիլիսոփայության ճարտարապետ էր»...:

«Գեորգ Բրուտյան՝ հարյուր տարի



անց. ժառանգություն և արդիականություն» խորագրով հիմնական զեկույցով հանդես եկավ Հասմիկ Հովհաննիսյանը:

Տեղի ունեցավ պարգևատրման հանդիսավոր արարողություն. մի խումբ մասնակիցներ պարգևատրվեցին «Դավիթ Անհաղթ» բարձրագույն պարգև և «ՀՊՄՀ 90-ամյակ» մեդալներով:

Ներկաները դիտեցին գիտնականի նվիրված փոքրիկ փաստավավերագրական ֆիլմ, ինչպես նաև վայելեցին հայկական պարերի շարանով համերգային ծրագիր, որը ներկայացրին Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժնի ուսանողները:

Գիտաժողովի շրջանակներում FISP-ի նախագահությունը անցկացրեց կլոր սեղան՝ «Մշակութային ինքնության մարտահրավերները» թեմայով:

Գիտաժողովի թեմատիկ ուղղություններն էին՝ փիլիսոփայություն, կրթություն, հոգեբանություն և սոցիոլոգիա: Երկօրյա գիտաժողովի հիմնախնդիրները քննարկվեցին «Փիլիսոփայական գիտելիքի զարգացման հեռանկարները կրթության մեջ. քննական, վերլուծական, ստեղծարար մտածողության ուսուցման հիմնախնդիրներ», «Արհեստական բանականությունը ժամանակակից կրթության օրակարգում. մանկավարժական մարտահրավերներ, ռազմավարություններ և լավագույն փորձ», «Հոգեբանության արդի հիմնախնդիրները կրթության ոլորտում», «Կրթության արդի խնդիրները սոցիոլոգիայի համատեքստում» մասնաճյուղերում:

Միջազգային գիտաժողովի երկրորդ օրը Մանկավարժական համալսարանում մասնաճյուղերում շարունակվեցին մասնագիտական քննարկումները,

որոնց առանցքում էին կրթության և փիլիսոփայական մտքի արդի զարգացումները, միջգիտակարգային համագործակցության հնարավորությունները, ժամանակակից բարձր տեխնոլոգիական փոփոխությունների պայմաններում նոր մարտահրավերներն ու ապագայի տեսլականը:

Մասնաճյուղերում ներկայացված զեկույցներում հանգամանորեն քննարկեցին կրթության մեջ փիլիսոփայական մտքի զարգացման արդի ուղղությունները, կրթության փիլիսոփայական հիմքերը, տեղեկատվական հասարակության ազդեցությունը կրթական գործընթացների վրա, անդրադարձան կրթության ոլորտում արհեստական բանականության կիրառմանն ու ազդեցությանը ուսուցման որակի արդյունավետության բարձրացման վրա, կրթական ռազմավարություններին, հանրակրթական համակարգի զարգացման, մեդիակրթության, կրթության կառավարման ժամանակակից մոդելներին, կրթական միջավայրում մարդու վարքագծի և հոգեբանական աջակցության, մասնագիտական զարգացման խնդիրներին, կրթական փոփոխությունների սոցիալական ազդեցությանը, կրթական քաղաքականության, թվայնացման, սոցիալական գործընկերության և այլ հարցերի:

Մասնակիցներն ամփոփեցին միջազգային երկօրյա գիտաժողովի արդյունքները և հանդես եկան ուղերձով՝ ընդգծելով կրթության հումանիստական արժեքների պահպանման, քննադատական և ստեղծարար մտածողու-

թյան զարգացման, կրթության մեջ փիլիսոփայության դերի ամրապնդման ու արհեստական ինտելեկտի կիրառման էթիկական և մանկավարժական սկզբունքների մշակման անհրաժեշտությունը:

Նրանք արժևորեցին ու բարձր գնահատեցին ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի գիտակրթական ժառանգությունը, որը մինչև այսօր շարունակում է ձևավորել միջազգային մասնագիտական, գիտակրթական երկխոսություն:

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ամփոփեց գիտաժողովի արդյունքները՝ ընդգծելով, որ համալսարանում ձևավորվում են նոր ակադեմիական ավանդույթներ, իսկ միջազգային գիտաժողովը համարեց իրական գիտատոն, որը երկու օր շարունակ միավորել էր աշխարհի տարբեր ոլորտների գիտնականների:

Գիտակրթական ոլորտում նորարարությունների տարածման, համագործակցության խորացման և գիտելիքի փոխանակման նոր հնարավորությունների ստեղծման տեսանկյունից գիտաժողովը կարևորեց նաև ՀՊՄՀ գիտության հարցերով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:

Գիտաժողովում ներկայացված և հրատարակության երաշխավորված զեկույցները կհրատարակվեն WISDOM գիտական հանդեսում:

Սիլվա Ասրյան

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստը բավականին հագեցած օրակարգով ընթացավ:

Նիստն սկսելուց առաջ, ավանդույթի համաձայն, Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց համալսարանի հոբելյարներ Սուսաննա Փիլոսյանին, Վլադիմիր Կարապետյանին, Կարինե Քոչարյանին, Տիգրան Պետրոսյանցին, Լևոն Ավագյանին, Խաչիկ Չալիկյանին, Գագիկ Կարապետյանին, Գայանե Ճանճապանյանին, Կամո Խաչատրյանին, Ռուզաննա Պետրոսյանին, Ռիտա Գևորգյանին, Հասմիկ Հովհաննիսյանին և նրանց շնորհավորական ուղերձներ հանձնեց:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց 2026-2030 թթ.-ի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ռազմավարական ծրագիրը: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ռազմավարական նոր ծրագրի կառուցվածքը, անդրադարձավ առաքելությանը, տեսլականին, հիմնարար արժեքներին, ռազմավարական 7 ուղղություններին և ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների կատարման հիմնական մոտեցումներին ու սկզբունքներին:

Ռազմավարական նոր ծրագիրն ի գիտություն ընդունվեց խորհրդի անդամների կողմից:

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերում էր 2025-2026 ուտարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորմանը, որը ներկայացրեց Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը: Վերջինս թվերի վիճակագրությամբ ներկայացրեց ամփոփիչ տեղեկատվություն, միաժամանակ խոսեց շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ուժեղ և թույլ կողմերի մասին, նաև հանդես եկավ առաջարկություններով:

Ներկաները քվեարկությամբ հաստատեցին զեկույցը:

Գիտության հարցերով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կողմից ՀՊՄՀ-ում բազային ֆինանսավորվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների ատեստավորման արդյունքները, ըստ որի ատեստավորման է ենթարկվել 3 գործող ծրագրերի 38 գիտաշխատող:

Ներկայացված տեղեկատվությունը ևս ընդունվեց ի գիտություն:

Գիտական խորհրդի նիստում քննարկեցին նաև ընթացիկ հարցեր, հաստատեցին ատենախոսության թեմաներ և մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ:

Հաստատվեցին նաև ՀՊՄՀ բարեվարքության նոր կանոնագիրքը, էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, հետազոտական ինստիտուտների, ինչպես նաև Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտության գիտական կենտրոնի կանոնադրությունները, բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի հոբելյարների պարգևատրման, ուսումնաօժանդակ համակազմում զբաղեցրած պաշտոնին աշխատողի համապատասխանության գնահատման (ատեստավորման) կարգը, ինչպես նաև կրթական ստորաբաժանման գրասենյակի վարչարարության մասնագետի պաշտոնի անձնագիրը: Գիտական խորհուրդն ընդունեց նաև «Ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշչում» անհրաժեշտ փոփոխություններ կատարելու մասին որոշումը:

Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը խորհրդի անդամների հաստատմանը ներկայացրեց ՀՊՄՀ-ում գործող 4 լաբորատորիաների կանոնակարգերը:

Սիլվա Ասրյան

Հայ-իրանական համագործակցության շուրջ

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հունիսի 16-ին հյուրընկալեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի տնօրեն Մոհամմադ Ասադի Մովահեդին:

Հյուրերը ներկայացրին, որ լավ հարաբերություններ ունեն Հայաստանի տարբեր գիտակրթական հաստատությունների հետ և որ Մանկավարժական համալսարանի հետ հանդիպումն ինչ-որ չափով ուշացրել են:

Մոհամմադ Ասադի Մովահեդին ընդգծեց, որ մշակութային առումով երկու ազգերը շատ մոտ են իրար, իսկ Իրանում ապրում են մեծ թվով հայեր, որոնք գործունեություն են ծավալում մշակույթի և այլ ոլորտներում:

Կենտրոնի տնօրենը խոսեց Հայաստանում գործող 20 դպրոցներում ընդհանուր թվով 4500 աշակերտների պարսկերենի ուսուցման մասին՝ ընդգծելով, սակայն, որ պարսկերեն դասավանդող ուսուցիչները դասավանդման մեթոդիկայի խնդիր ունեն:

Մոհամմադ Ասադի Մովահեդին խոսեց առաջիկա համագործակցության մասին և հանդես եկավ մի շարք առաջարկություններով՝ Մանկավարժականում պարսկերենի ուսուցման ամբիոնի բացում, պարսկերենի ուսուցիչների վերապատրաստում դասավանդման մեթոդիկայի գծով՝ հավելելով, որ դասախոսների և դասավանդման նյութերի հարցում աջակցություն կցուցաբերեն:

«Որպես հին հարևաններ՝ մենք համատեղ անցած պատմական ճանապարհ և համագործակցելու հնարավորություններ ունենք»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը: Նա ներկայացրեց 100-ամյակի շեմը վաղուց հատած համալսարանի պատմությունը, ապա համագործակցության մի քանի եզրեր կանխանշեց՝ համագործակցություն Օտար լեզուների ֆակուլտետում՝ պարսկերենի ուսուցման, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում՝ պատմության մեթոդաբանության, իսկ մշակութային ուղղվածությամբ ֆակուլտետներում՝ «Արվեստ-արհեստ» մասնագիտությունների շրջանակում, ինչպես նաև մատնանշեց առաջիկա քայլերն սկսել համալսարանում լեզվի և մշակույթի կենտրոն բացելուց, որի նախադեպը կա՝ հունգարերենի հետ կապված:

Խոսակցություն ծավալվեց նաև Իրանի Իսլամական Հանրապետության՝ մանկավարժական ուղղվածության որևէ համալսարանի հետ համագործակցելու շուրջ:

Մոհամմադ Ասադի Մովահեդին հնարավոր համարեց նաև երկու երկրների համալսարանների ուսանողների և դասախոսների փոխանակման, մշակութային համատեղ ծրագրեր իրականացնելու հարցերի շուրջ: Նա ընդգծեց, որ Հայաստանում պարսկերենի ուսուցիչների պահանջարկ կա, որ պարսկերենը աստիճանաբար ձեռք է բերում ավելի մեծ հանրայնացում, և կարծում է, որ Հայաստանում պարսկերենը պարտադիր լեզու դարձնելը կիրառական նշանակություն կունենա:

Ռեկտորը պատրաստակամություն հայտնեց հարևան երկրի հետ հնարավոր համագործակցության համար՝ մատնանշելով մեր պետության քաղաքականությունն այդ ուղղությամբ:

Առաջիկայում համալսարանում, համապատասխան ֆակուլտետների ղեկավարների հետ կքննարկվեն բոլոր առաջարկներն ու համագործակցելու հնարավոր ուղիները, որոնք կամրագրվեն հուշագրով:

Սիլվա Ասրյան

ԱՄՓՈՓԵՑԻՆ ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Մանկավարժության ամբիոնը հունիսի 23-ին ամփոփեց «Մեդիագրագիտություն և պատասխանատու թվային քաղաքացիություն» թեմայով դասախոսուսանող համահամալսարանական նախագիծը, որին մասնակցել էին համալսարանի 9 ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներից կազմված ներկայացուցչական խմբեր:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը ներկայացրեց մեդիանախագծի արդյունքները՝ կարևորելով նախագծի ընձեռած հնարավորությունները: Նա ընդգծեց, որ ուսանողները նախագծի շրջանակում ոչ միայն ուսումնասիրեցին բազմաթիվ մեդիանյութեր, կատարեցին հետազոտություններ, այլ նաև գործնական աշխատանքներ իրականացրին՝ աշխատեցին աշակերտների և ուսուցիչների հետ, իրազեկման նյութեր և ստեղծագործական նախագծեր ստեղծեցին, անցկացրին հարցազրույցներ:

«Նախագծի ամենամեծ արդյունքը ոչ միայն տեսանյութերն են, փոդքաստները, այլ այն, որ ուսանողները սովորեցին հարցեր տալ, որովհետև մեդիագրագիտությունը սկսվում է հարցերից: Նախագիծը հնարավորություն տվեց տարբեր տարիքի և կրթական մակարդակ ունեցող ուսանողներին համագործակցել, դասախոսները նույնպես կարողացան միասին աշխատելով՝ իրարից սովորել և ուսանողների հետ միասին նոր գիտելիք ստեղծել»,-ասաց Աիդա Թոփուզյանը:

Նա կարևորեց նախագծի մեթոդը՝ դրված նպատակների իրագործման համար, ապա շնորհակալություն հայտնեց բոլոր ուսանողներին՝ նախաձեռնողականության և ստեղծագործականության համար, ինչպես նաև դասախոսներին, որոնք շատ հետաքրքիր աշխատանք կազմակերպեցին և ղեկավարեցին ուսանողների աշխատանքները:

Մեդիագրագիտության շաբաթը կարևորեց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ հորդորելով այն դարձնել շարունակական: «Ցանկացած գործընթաց պետք է լինի շարունակական ու տևական»,-ասաց նա՝ վստահեցնելով, որ ուսանողներն այդ նախագծով մի քանի կարևոր գործողություններ են իրականացրել՝ ինչպես թեմայի ընտրությունը, մարտահրավերներին դիմակայելու միջոցների կիրառումը և այլն: Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց այն հանգամանքը, թե «մենք որքանով գիտենք թվային աշխարհում ապրելու կանոնների, իրավունքների ու պարտականությունների մասին»: Նա միաժամանակ կարևորեց ուսանողների կողմից ընտրված նախագծային ուսուցման մեթոդը, որն այսօր ժամանակակից աշխարհում ուսումնառության մոտեցումներից ամենակարևորն է համարվում՝ մտածող, վերլուծող, քննադատ քաղաքացի ձևավորելու գործում:

«Սա համագործակցություն է մի քանի հարթակներում: Այս համատեքստում մենք ենք որոշում՝ ինչպիսի փոփոխություն ենք ուզում կատարել, այդ փոփոխություններին զուգահեռ ինչպես առաջ գնալ ու զարգանալ: Իսկ զարգացումը պետք է արագ փոփոխվող աշխարհում, որպեսզի դառնաք լավ քաղաքացի ու մասնագետ»,-ամփոփեց Լիլիթ Մկրտչյանը:

Ծրագրի համակարգողներից Լուսինե Պողոսյանը շնորհավորեց ուսանողներին՝ հիանալի գաղափարներ մարմնավորելու, հանրային հետազոտություններ իրականացնելու, փոդքաստի ձևաչափը որպես գործիք օգտագործելու և ընդհանրապես նախագծին ակտիվ ու բովանդակային մասնակցության համար:

Ըստ անվանակարգերի Լուսինե Պողոսյանը ներկայացրեց յուրաքանչյուր թիմի տեսանկարահանած լավագույն հատվածներից, այնուհետև տեղի ունեցավ հավաստագրերի հանձնում «Լավագույն կրթական միջավայրի ձևավորում», «Լավագույն հանրային հետազոտություն», «Լավագույն կրթական փոդքաստ», «Համայնքային լավագույն մեդիահետազոտություն» և այլ անվանակարգերում հաղթած ուսանողներին ու նրանց աշխատանքները ղեկավարած դասախոսներին:

Սիլվա Ասրյան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ՆՐԱ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԴՊՐՈՑՆ Է

Ինչպես է նորածին մանուկը, մայրական գուրգուրանքով պարուրված, զորանում, դառնում հասուն և կազմակերպված 30-ամյա երիտասարդ: Ճիշտ այդպես էլ Երևանի Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան դպրոցը նրա տնօրեն Մելանյա Գեղամյանի մայրական զգոն ու հոգատար ձեռքերում նորելուկ փոքրիկ հաստատությունից դարձավ այսօր մայրաքաղաքում իր անունն ու տեղն ամրակայած հեղինակավոր կրթօջախ, իսկ նրա առաջին շուրջ քսան սաների թիվն այժմ հասել է հազարի:

Մայրական նվիրվածություն, միաժամանակ՝ խստություն: Ծնողական հոգածություն, դրա կողքին՝ պահանջկոտ ու սկզբունքային մոտեցում: Կարգապահություն, անաչառություն, միաժամանակ՝ հոգեբանի նրբանկատություն: Կրթության և դաստիարակության գործում՝ ոչ մի մանրուք: Մտավոր զարգացմանն ու գիտելիքին համազոր՝ մարմնի և հոգու կրթում: Կազմակերպվածություն: Դպրոցը՝ մի կուռ ընտանիք, որի ուղենիշը աստվածաշնչյան պատվիրաններն են: Ամենօրյա անդուլ աշխատանք՝ հանուն կրթված սերնդի, հանուն պայծառ տեսլականի, հանուն հարազատ երկրի ապագայի: Սրանք են Մելանյա Գեղամյանի կյանքի և գործունեության առաջնահերթությունները:

Նրա անձնվեր աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն. 2004 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կրթության և գիտության ոլորտում ունեցած մեծագույն ավանդի համար տիկին Գեղամյանին պարգևատրեց ոսկե հուշամեդալով: Ինքը՝ որպես տնօրեն, այդ պարգևին համարժեք է համարում Ավետիսյան դպրոցի տարբեր տարիների շրջանավարտների չխզվող կապը հարազատ կրթօջախի հետ, արդեն կայացած մասնագետ կամ դեռևս ուսանող նախկին սաների հաճախակի այցելությունները հարազատ դպրոց: Մեկնաբանության կարիք չունի այն, որ Ավետիսյան դպրոցի շրջանավարտները՝ բոլորն անխտիր, ուսումը շարունակում են մեր երկրի կամ արտասահմանյան բուհերում, իսկ սաները ամենատարբեր մրցույթներից վերադառնում մեդալներով ու պատվոգրերով, ամեն տարի հաղթում են առարկայական օլիմպիադաներում. միայն այս տարի առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլից ավետիսյանցիները բերեցին ութ դիպլոմ, որոնցից երկուսը՝ առաջին կարգի: Ուրեմն՝ իզուր չեն անցել տքնանքի ու նվիրումի տասնամյակները, ուրեմն՝ ճիշտ է նախագծված եղել ուսումնառության արահետը:

Տիկին Գեղամյանը, սակայն, երբեք չի գոհանում ձեռք բերածով և իրավամբ պնդում է՝ յուրաքանչյուր աշակերտի մեջ նստած է վաղվա գիտնականն ու հերոսը, և դպրոցի պարտականությունն ու պարտքն է արթնացնել դրանք:

Մեկ այլ ասպարեզ է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մելանյա Գեղամյանի գիտամանկավարժական գործունեությունը: Բավական է ասել, որ 2010 թվականին ԱՊՀ դաշնային գործակալությունը, ՌԴ արտգործնախարարությունը, ՀՀ-ում միջազգային հումանիտար համագործակցության ներկայացուցչությունը և ՀՀ-ում ռուսաց լեզվի ուսումնամեթոդական կենտրոնը նրան շնորհակալական նամակ հղեցին մասնագիտական բարձր կարողությունների և նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի համար: Երկու տարի անց՝ 2012-ին, դրան հաջորդեց Հայաստանում ՌԴ դեսպանի շնորհակալական նամակը:

Մելանյա Գեղամյանը «Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիայի համահիմնադիրներից է, ԵՊՀ և ՀՊՀՄ տարբեր հանձնաժողովների անդամ: Նրա մասնագիտական հոդվածները տպագրվում են հայաստանյան և ԱՊՀ այլ երկրների գիտական և մանկավարժական պարբերականներում:

Նա նաև ստեղծագործում է՝ խոհագրություններ, բանաստեղծություններ, որոնցից յուրաքանչյուրը անկեղծ և մտերմիկ զրույց է ընթերցողի հետ: 2024-ին լույս տեսավ նրա երկրորդ գիրքը՝ «Սեր իմ Արցախ» ժողովածուն: Արցախն ու Արցախի թեման Մելանյա Գեղամյան քաղաքացու, մտավորականի և ստեղծագործողի հոգում վաղուց են դարձել փայփայելի երգ, մտքում՝ նուրբ ու ցավոտ ասելիք. նույնիսկ շատ ավելի վաղ, քան իր զինվոր որդու ծառայությունը Արցախում տասնամյակներ առաջ: 44-օրյա կենաց-մահու պայքարի դժնի օրերին դպրոցի ընդարձակ սրահը վերածվել էր արհեստանոցի. տնօրենի շուրջը կուռ ընտանիքի նման համախմբված՝ աշխատում էին բոլորը՝ աշխատակազմը, ծնողները, սաները. ամեն ինչ արվում էր հանուն ռազմաճակատի, և առավոտյան առաջինը դպրոցի շենք մտնողն ու վերջինը այնտեղից գնացողը տնօրենն էր: Անհնար է մեկ առ մեկ թվել նաև բարեգործական այն բոլոր ձեռնարկումները և կամավորական աշխատանքները, որոնց նախաձեռնողը, անմիջական ղեկավարն ու մասնակիցն է եղել տիկին Մ. Գեղամյանը: Եվ ամենևին պատահական չէ, որ իր կառավարական պարգևների շարքում նա հպարտությամբ առանձնացնում է իր հայրենասիրության և նվիրվածության առհավատչյաները՝ ՀՀ ՊՆ և ԱՀ բարձր պարգևները:

Մելանյա Գեղամյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ուսումնական տարին դեռ չի ավարտվել. իր տարերքի մեջ է հունիսյան քննաշրջանը՝ խորհրդատվական հանդիպումներ, քննություններ, խորհրդակցություններ, շրջանավարտների այց, հանդիպումներ ծնողների հետ... Եվ Մելանյա Գեղամյանը այդ ամենի կիզակետում է, քանզի համոզված է, որ հայրենիքն ու հայրենասիրությունը սկսվում են դպրոցից:

Հարմիկ Սարգսյան
Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան դպրոցի մանկավարժ, Հայաստանի Ժուռնալիստների միության անդամ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Հիշողությունը կորցնել հնարավոր չէ

Արմենը 20 տարեկան է: Այսօր ապրում է տնից շատ հեռու:

Իր մանկության Քրքջանը մնացել է հիշողության մեջ: Երբ խոսում է իր ծննդավայրից՝ առաջինը հիշում է քաղցր թութը: «Վա՛յ, պա թոթըը... Թթենինեն շատ-շատ ա իլալ, մեզ էլ մխելա բաղերա իլալ, թութի վեր սեզոնը կյալիս ա, իլալ ամեն տարի թոթ ընք իլալ թափ տալիս մինչև ամառվա վերջ»:

Նա հիշում էր, թե ինչպես էին ընկերներով հավաքվում և միասին թութ թափ տալիս: «Մենք կարոտում ընք էդ պահերը»:

Արմենը հիշում է Քրքջանի բնությունը, մաքուր օդը և այն աղբյուրը, որի ջրի համին կարոտ է մնացել: «Հայերը թաքուն գնում էին աղբյուրից ջուր տանելու: Աղբյուրը 1876 թվականին են կառուցել, շատ ճանաչված է եղել, երկար հերթ էր լինում: Ստեփանակերտից ու շրջաններից մարդիկ կիլոմետրեր էին անցնում, որ գային ջրից տանեին, իսկ արդեն բլոկադայի ժամանակ քաղաքից ոտքով էին գալիս ջրի»:

Արմենի համար Քրքջանը առաջին հերթին մանկություն էր: Հիշում էր դպրոց տանող ճանապարհը, որը տրանսպորտով չի անցել, քանի որ բնությունը փոքրիկ դպրոցականին քաղցած չէր թողնում: «Ճանապարհին ծառեր ա իլալ՝ շլորի, խնձորի, կառալոկի, խաղողի, տանձի նիտալիսում իլալ սումկաս ուտելավ քինալիս կյալիս»:

Արմենի մանկության ճանապարհները միայն գյուղի փողոցներով չէին անցնում: Դրանք տանում էին դեպի դաշտեր, ծմակուտներ ու մի գետ, որը դարձել էր փորձություն. «Ծմակի մեջավը էրկան ճանապարհ ընք իլալ քինալիս, լղանանք կետումը ու ենքան ընք սիրալ էդ կետը, վեր թորքերը կետին կլխեն նստած՝ քինալիս ընք իլալ, լղնալիս կյալիս, 10 տարեկանից էդ կետը քինալիսում իլալ մինչև վերջը»:

Արմենը պատմում է նաև, որ մարդիկ գետին ասում էին «ինձիսկի» այսինքն հնդկական, քանի որ վերևից գետին նայելիս քարերը ու հոսքը հնդկական տառերի են նմանվում:

«Ներսումս կուտակվածը հիշեցնում է, կարոտում եմ ու նորից ինձ տանում այն ճանապարհով ու դժվարությունների միջով, որն արդեն անցել եմ»:

Այսօր նա հեռու է Քրքջանից, բայց բարբառը, գետի անունը, թթի քաղցր համը շարունակում են ապրել նրա մեջ: Տարածքը կարելի է կորցնել, բայց հիշողությունը՝ ոչ:

Գայանե Միքայելյան
Հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրս

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ԴԱՎԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

-Հարգարժան պարոն Պողոսյան, ինչպե՞ս ընտրեցիք Ձեր մասնագիտությունը:

-Իմ սերնդի համար կային մի շարք նորաձև մասնագիտություններ, որոնցից մեկն էլ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետն էր, որտեղ էլ սկզբնապես դիմեցի, բայց մեկ միավոր չբավարարեց անվճար համակարգի համար: Ու քանի որ մի քանի մասնագիտություններ էի նշել, և իմ ստացած միավորները անցողիկ էին Մանկավարժականում նոր բացված «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» մասնագիտության համար, հաշվի առնելով, որ թանգարանների և մշակութային ժառանգության ոլորտը շատ հետաքրքիր է, ես որոշեցի սովորել այս բաժնում: Բարձր առաջադիմությամբ 4 տարի սովորելուց հետո, 2004-2005 ուսումնական տարում ես դարձա «Գրադարագիտության և մատենագիտության» ամբիոնի ասպիրանտ, բայց իմ ուսումնասիրության թեման վերաբերում էր թանգարաններին և թանգարանային հաղորդակցությանը:

-Այնուհետև աշխատանքի անցաք ՀՀ Մշակույթի նախարարության համակարգում գործող Արգելոց-թանգարանների պահպանության ծառայությունում...

-Այո, և զուգահեռ շարունակում էի հետբուհական կրթությունը, նաև մասնակցում էի վերապատրաստումների:

2006-ին ես վերապատրաստում անցա Նյու Յորքի համալսարանում: Նյու Յորքի համալսարանի խորհուրդն ինձ ընտրեց որպես Հայաստանից մասնակից, թեև ես նոր էի մասնագիտական դաշտում սկսել աշխատել: Դժվար ժամանակներ էին՝ հայալեզու գրականության, հաղորդակցական ուղիների բացակայություն... Մենք՝ այդ կուրսի առաջին շրջանավարտներս՝ 16 հոգի, մեծ խանդավառությամբ սկսեցինք աշխատել... Հետագայում նրանցից շատերը շարունակեցին այլ բուհերում, բայց ես շարունակեցի սովորել մայր բուհում, և կարծում եմ՝ կարևորն այն չէ, թե ինչ բուհ ես ընտրել, կարևորը քո մասնագիտական ներգրավվածությունն է: Թեև բուհի հնարավորություններն էլ շատ կարևոր են:

Շատ կարևոր է, թե որքան ներդրում ես անում քո կրթության մեջ, և այդ ներդրումը որքանով է հետ գալիս: Որքան դու ձգտում ունես, այնքան կհասնես քո ուզած կետին՝ անկախ բուհից, անկախ միջավայրից: Շատ հետաքրքիր էր, որ ես հնարավորություն ունեցա տեսնել նաև արտերկրի բուհերը և նաև ինչ հնարավորություններ կան այնպիսի զարգացած երկրներում, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

2006-ից սկսեցի նաև մասնակցել տարբեր կոնֆերանսների ու հետազոտական նախագծերի:

-Իսկ ո՞րն էր Ձեր գիտական ուսումնասիրության թեման:

-Այնպես ստացվեց, որ իմ գիտական աշխատանքը՝ «Թանգարանը որպես մշակութային հաղորդակցության միջավայր», ավելի շուտ տպագրվեց, քան տեղի ունեցավ պաշտպանությունը: Հավելեմ՝ դա գիտատեսական աշխատանք էր՝ հենված իմ փորձառությունների և հիմնականում հայկական փորձի վրա:

-Իսկ ե՞րբ սկսեցիք դասավանդել հարազատ ֆակուլտետում:

-Պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո շարունակեցի հետբուհական կրթությունս, միաժամանակ աշխատելով: Իմ գիտական նոր ղեկավարը պրոֆեսոր Լեմս Ներսիսյանն էր, որն ինձ շատ օգնեց և ում շատ շնորհակալ եմ:

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում երջանկահիշատակ Լավրենտի Բարսեղյանը թանգարանագիտության ամբիոնի վարիչն էր: Հենց նա էլ ինձ հրավիրեց դասավանդելու իր ղեկավարած ամբիոնում:

2010 թվականից սկսեցի դասավանդել թանգարանագիտական առարկաներ: 2015-ին պաշտպանելուց հետո շարունակեցի զուգահեռ աշխատել ժառանգության ոլորտի տարբեր ինստիտուտների հետ: Այս ընթացքում թանգարանային ոլորտին վերաբերող երկու գիտական աշխատանք հրատարակեցի, որոնք նորություն էին մեր իրականության մեջ:

Շուրջ 15 տարի դասավանդեցի Կուլտուրայի ֆակուլտետում: Եվ հարցին, թե ինչու ընտրեցի այս բուհն ու այս մասնագիտությունը, պետք է ասեմ՝ կյանքն ինձ տարավ այս ուղղությամբ:

-Թանգարանային ոլորտն այսօր ավելի ընդգրկուն է դարձել և դիտարկվում է առավել նոր հայացքի ներքո, այնպե՞ս չէ:

-Պետք է ասել, որ այն մեր երկրի համար ռազմավարական նշանակության հարց է: Մենք խնդիր ունենք նոր սերնդին ցույց տալու, թե մենք ով ենք: Շատ գրքեր են գրվում, մեդիահաղորդումներ տրվում, բայց միշտ էլ պետք են այն իրական հիմքերը, որի վրա կառուցում ու ժառանգում ես քո ինքնությունը: Սա հիմնաքարային է: Թանգարաններն են, որ տալիս են պատմությունների հիմքը և բոլոր սերունդների համար են: Այս կառույցները ամենաապագայինն են, որովհետև ապագային են նայում:

Կրթության և հատկապես ոչ ֆորմալ կրթության առաջ ճանաչողության և ինքնության բացահայտման խնդիր է դրվում, և բոլոր երկրների համար է դա ինքնության խնդիր, եթե չասենք, որ թանգարաններն իրենց մեջ պարունակում են բազմաթիվ գիտահետազոտական լայն ներուժ ու զգայական

«Թանգարաններն են, որ տալիս են պատմությունների հիմքը և բոլոր սերունդների համար են: Այս կառույցները ամենաապագայինն են, որովհետև ապագային են նայում».

Դավիթ Պողոսյան

մի հզոր դաշտ:

Այսօր, երբ շատ է զարգացել տուրիզմը, բացվել են հնարավորությունները, մարդիկ փոքր գումարով կարող են այցելել տարբեր երկրներ: Ինչո՞ւ են մարդիկ այցելում Լուվրի կամ Բրիտանական թանգարան. այնտեղ բացահայտում են այդ երկրի հետ կապված շատ կարևոր բաներ, և, ընդհանրապես, համաշխարհային ժառանգությունը:

Մենք շատ հարուստ մշակութային ժառանգություն ունենք. այդ առումով մեր թանգարանները ներկայացնելու շատ բան ունեն: Նույնիսկ պատմական մեծ Հայաստանից մնացած իրական ու պատմական Հայաստանի այս մասի վրա մենք բացահայտել ենք շատ մեծ ու հարուստ հնագիտական ժառանգություն:

Այսօր Հայաստանի պատմության թանգարանում հավաքածուների թիվը 400 հազարից ավելի է: Եվ ամեն տարի այդ թիվը մեծանում է հազարավոր նոր նմուշներով: Շատ զարգացած երկրներ չունեն այս ռեսուրսը, թեև շատ նոր են, թեև շատ զարգացած են: Նրանք չեն կարող խոսել իրենց երկրի մասին՝ սկսած, ասենք, քարե կամ բրոնզե դարից, մի քանի հազարամյա պետականության մասին: Թանգարաններն այս ամբողջի առանցքում են: Պետք էր տեսնել, թե «Թանգարանային գիշեր» միջոցառմանը երիտասարդների ինչպիսի հոսք էր Հայաստանի պատմության թանգարանում:

-Բոլոր դեպքերում ունենք նոր բացահայտումների կարիք...

-Այո, իսկապես ունենք շատ բացահայտումների կարիք: Եվ այս մասնագիտական դաշտում, երբ շատ մասնագիտություններ դառնում են նորաձև, հաճախ դրանք պայմանավորված են աշխատավարձային հիմքով, բայց պետք է ասել, որ դա էլ է հարաբերական: Կյանքը անընդհատ թանկանում է, և առաջ են գալիս ավելի հեշտ գումար ձեռք բերելու ձևեր, որի համատեքստում թվում է, թե թանգարանը հնացավ, այնտեղ քիչ աշխատավարձ են ստանում: Ահա ինչու այստեղ շատ հաճախ հավաքվում են նվիրյալներ, որոնց համար առաջինը այս արժեքային համակարգի կարևորումն է և իրենց դերը այդ արժեքային համակարգում: Եվ տարիների ընթացքում իրականում նրանք անփոխարինելի ռեսուրս են դառնում պետության համար:

-Դուք ասացիք, որ թանգարաններն անփոխարինելի դեր ունեն մեր ինքնության վրա հարձակումների դեմ, արդյո՞ք թանգարանները այդ հարձակումների վրա հակազդելու միջոց են...

-Այսօր բավականին շատ հարձակումների է ենթարկվում մեր ինքնությունը, ո՞վ պետք է դրա դեմ կանգնի, միայն զենքով հնարավոր չէ: Այսօր աշխարհում կա ինքնահաստատվելու խնդիրը, և միշտ է եղել: Բոլորը փորձում են կառուցել իրենց ինքնությունը առկա հիմքերի վրա: Շատերը չունեն և փորձում են գտնել դրանք, մյուսները ունեն այդ հիմքերը, բայց խնդիր ունեն ավելի ճանաչելի դարձնել դրանք: Հատկապես փոքր պետությունների համար դա խնդիր է՝ անկախ ունեցած ռեսուրսներից, ուղղակի այդ ռեսուրսը պետք է կարողանալ օգտագործել, ներկայացնել...Դա անվտանգության հարց է. եթե քեզ չեն ճանաչում՝ դժվար թե քեզ օգնեն... Այդ տեսանկյունից այսօր թանգարանները ռազմավարական նշանակություն ունեն: Իրականում ամեն մի ներկայացրած ցուցահանդես ավելին կարող է լինել, քան որևէ քարոզչություն: Աշխարհում տարբեր լեզուներ կան, բայց թանգարանային լեզուն ամենաազդեցիկներից է և շարունակելու է մնալ՝ անկախ տեխնոլոգիաների զարգացման ամենօրյա ընթացքից: Եվ թանգարանում է, որ արժևորում են, հասկանում են, ճանաչում են:

-Ասել է թե թանգարանագիտությունը ապագայի՞ մասնագիտություն է...

-Ես վստահ եմ, ժամանակի ընթացքում կփոխվեն մոտեցումները այս մասնագիտության հանդեպ, և ավելի շատ երիտասարդներ կներգրավվեն: Այս ոլորտի մասնագիտացումն ու մասնագետները շատ կարևոր են, հասկանալի է՝ բանկային ոլորտ, տնտեսական, ֆինանսներ..., բայց

պետությունները կառուցվում են ինքնությունների վրա, և եթե դու քո ինքնությունը չես կառուցում, կարող ես հետո ուղղակի խնդիր ունենալ, որովհետև այսօրվա գլոբալացվող աշխարհում խնդրահարույց շատ հարցեր կան:

-Ուրեմն թանգարանները մեր պատմության վկայագրերն են...

-Մեր վկայագրերն են, և ոչ միայն, մեր ԴՆԹ-ն են... Մեր կոդերն ամփոփվում են թանգարաններում ու ժառանգության ինստիտուտներում, և դա լավ մեխանիզմ է: Պատահական չէ, որ թանգարանների ստեղծման մեխանիզմները տարածվել են աշխարհով մեկ, որովհետև բոլորին դա պետք է: Եվրոպական լուսավորական մշակույթի նոր դասական այս թանգարանի մոդելը եվրոպական դասական լուսավորչական մոդելի վերարտադրությունն է:

-Իսկ միջազգային համագործակցության ի՞նչ օրինակներ ունեք:

-Այդ ուղղությամբ վերջին տարիներին հսկայածավալ աշխատանք է տարվում՝ ոչ միայն մեր ժառանգությունը արտերկրի տարբեր թանգարաններում ներկայացնելու, այլ նաև աշխարհի շատ հեղինակավոր թանգարաններից նմուշներ բերելու և մեր հանրապետության սրտում նորովի բացահայտելու մեր իսկ հավաքածուները:

2024 թվականից սկսեցինք նաև փոխառել աշխարհի հայտնի թանգարաններից նմուշներ. դրանցից հայտնի է Անահիտ աստվածուհուն վերաբերող նմուշները:

Մենք այստեղ ստեղծել ենք մի թիմ՝ կազմված հնագետներից, մշակութաբաններից, թանգարանագետներից, այդ թվում նաև Մանկավարժական համալսարանի երիտասարդ մասնագետներից, և մեր բոլորի մոտեցումն այն է՝ ոչ միայն կարողանանք մեր ժառանգությունը պահպանել, այլև միջազգային ստանդարտներին համապատասխան պատշաճ կերպով ներկայացնել:

-Դա նաև մշակույթների մերձեցո՞ւմ է...

-Այո, բայց մենք պետք է մշակութային երկխոսության միջոցով ցույց տանք մեր տեղը: Երբ դու ունես հարուստ պատմական ժառանգություն և քաղաքակրթություն ՝ դրա մասին պետք է պատմես և կոնկրետ ցույց տաս ապացույցներով: Օրինակ, ներկա ցուցահանդեսը Լուվրի հետ շատ հետաքրքիր էր. արևելաքրիստոնեական հավաքածու էր եկել, որի կողքը դրված էր մեր քրիստոնեական ժառանգությունը: Եվ դրանք իրենց և՛ ստեղծագործական, և՛ արվեստային, և՛ հոգևոր մասերով չեն զիջում, ընդհակառակը, նաև որոշ դեպքերում իրենց առավելություններով են հանդես գալիս: Դա շատ կարևոր է՝ քրիստոնեական աշխարհում ցույց տալու մեր տեղը:

Սեպտեմբերին Բեռլինի հայտնի թանգարանային կղզուց շուրջ 50 առարկա ենք բերելու որոնք կհամադրենք մեր հավաքածուների հետ:

Հավելեմ, որ շուրջը պատերազմներ են, և հազարավոր կիլոմետրերով մշակութային արժեքներ տեղափոխելը բավականին բարդ է:

Եվ որպես ամփոփում ասեմ՝ թանգարանը միայն հավաքածուներով չի, թանգարանը առաջին հերթին մասնագետներով է, որակյալ մասնագետներով, որոնք պետք է առաջ տանեն այս կարևոր հաստատության առաքելությունը:

Հայաստանի պատմության թանգարանում շատ արժեքավոր գիտնականներ են աշխատել, և երբ մտածում ես, որ նրանց ոտնահետքերով ես քայլում ամեն օր այս տարածքում, պատասխանատվությունդ ավելի է մեծանում: Բոլոր դեպքերում նրանց արածն ու թողածը ոգեշնչում է:

Այս մասնագիտությունը շարունակականություն է սիրում, և եթե մի տեղ կապը կտրվում է, շատ դժվար է շարունակելը: Այս առումով իմ հարազատ բուհին կուզեի մաղթել հաջողություններ հատկապես այս մասնագիտության շարունակման առումով: Փոխհամագործակցության հուշագրի հիմքի վրա մեր փոխգործակցությունը երկուստեք բերում է օգուտներ. եթե ունենանք լավ մասնագետներ, դրանից և բուհը կշահի, և թանգարանը, և՛ ժողովուրդը:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«Կարծում եմ՝ սովորելը կյանքի բնական ընթացքն է, որը չի ավարտվում որևէ տարիքային սահմանագծով».

Ջուլետտա Մարտիրոսյան

-Տիկի՛ն Ջուլետտա, ներկայացեք, խնդրեմ: Ի՞նչ կպատմեք Ձեր մասին:

-Ես ծնվել եմ Թբիլիսիում, որտեղ էլ անցել են մանկությանս ու պատանեկությանս տարիները: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընտանիքով տեղափոխվեցինք Երևան, և հենց այստեղ սկսվեց իմ մասնագիտական ու հասարակական գործունեության կարևոր փուլը:

Ջուլետտա Ռուբենի Մարտիրոսյան
ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ,
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի մագիստրոս

Սովորել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ համալսարան) Կուլտուրայի ֆակուլտետի Գրադարանավարության և մատենագիտության բաժնում, որտեղ աշխատել եմ տասը տարի: Այնուհետև մասնակցել եմ Երևանի Արարատյան Հայրապետական թեմի կողմից կազմակերպված կրոնագիտական դասընթացներին, որից հետո դպրոցում դասավանդել եմ «Քրիստոնեական դաստիարակություն» առարկան:

Կյանքն ինձ հնարավորություն տվեց փորձառություն ձեռք բերել նաև դիվանագիտական ոլորտում: Երբ ամուսինս նշանակվեց Մոլդովայում Հայաստանի դեսպան, աշխատեցի Հայաստանի դեսպանատանը որպես հյուպատոս: Դա հետաքրքիր և պատասխանատու շրջան էր, որը նոր հմտություններ և մարդկային շփումների լայն շրջանակ պարգևեց ինձ:

- Ինչո՞ւ 72 տարեկանում որոշեցիք սովորել Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայում: Ձեր օրինակը վարակիչ է. կարելի է սովորել ցանկացած տարիքում, միայն թե սովորելու կամք պետք է ունենալ:

-Իրականում համալսարան վերադառնալու իմ որոշումը շատ անձնական էր և, միևնույն ժամանակ, շատ կարևոր պատճառ ուներ. իմ թոռնուհին ունի հազվագյուտ և բարդ նյարդային զարգացման խանգարում, և որպես տատիկ, մշտապես մտածել եմ՝ ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ՝ մասնագիտական գիտելիքներով օգնել նրան:

Հենց այդ մտահոգությունն էլ ինձ բերեց Մանկավարժական համալսարան: Դիմեցի համալսարանի Հատուկ բաժնի վարիչ տիկին Կիմա Կարախանյանին, որը, ծանոթ լինելով իմ պատմությանը և նպատակին, խորհրդակցեց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանի հետ, հաշվի առնելով իմ հետաքրքրությունները ու թոռնուհուս հետ կապված իրավիճակը՝ դեկանն էլ խորհուրդ տվեց դիմել էրգոթերապիայի բաժին: Ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանի աջակցությունն ու վստահությունն ավելի ամրապնդեցին իմ որոշումը:

Անկեղծ ասած, երբեք չեմ մտածել տարիքիս մասին: Եթե մարդն ունի նպատակ, հետաքրքրություն և սովորելու ցանկություն, ապա տարիքը դառնում է ընդամենը թիվ: Ես համալսարան եկա ոչ թե դիպլոմ ստանալու, այլ գիտելիք ձեռք բերելու, իմ թոռնուհուն և, եթե ուժերս բավականացնեն, նման դժվարություններ ունեցող մյուս երեխաներին օգտակար լինելու համար: Կարծում եմ՝ սովորելը կյանքի բնական ընթացքն է, որը չի ավարտվում որևէ տարիքային սահմանագծով:

-Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք ուսումնառության ընթացքում:

-Բնականաբար, երկար տարիների ընդմիջումից հետո ուսանողական կյանք վերադառնալը հեշտ չէր: Ժամանակակից կրթական համակարգը զգալիորեն տարբերվում է այն ժամանակներից, երբ ես ուսանող էի: Թվային տեխնոլոգիաները, առցանց հարթակները, գիտական նոր մոտեցումները սկզբնական շրջանում որոշակի դժվարություններ էին ստեղծում: Բայց ամենամեծ փորձությունը, թերևս, ոչ թե ուսումը, այլ ժամանակի ճիշտ բաշխումն էր: Մի կողմից՝ ընտանիք, թոռնուհուս խնամք և առօրյա պարտականություններ, մյուս կողմից՝ դասեր, հետազոտություններ, առաջադրանքներ և քննություններ: Երբեմն օրվա ընթացքում չէի հասցնում և ստիպված գիշերն էի պարապում:

Սակայն պետք է նշեմ, որ համալսարանում մշտապես զգացել եմ Հատուկ բաժնի վարիչ տիկին Կարախանյանի, դասախոսներիս, դեկանատի աշխատողների, տիկին Ռուզաննա Մանուկյանի և հատկապես համակուրսեցիներիս աջակցությունը: Երբ մարդը հայտնվում է բարեկամական և խրախուսող միջավայրում, դժվարությունները հաղթահարելի են դառնում: Քանի որ ես 72 տարեկան եմ, նրանց ջերմ վերաբերմունքը և հարգանքը ինձ համար առանձնահատուկ արժեք ունեին: Նրանք ինձ ուժ տվեցին հավատալու, որ կրթությունը տարիք չի ճանաչում:

Եթե այսօր հետ նայեմ այդ ճանապարհին, ապա կասեմ, որ դժվարություններ, իհարկե, եղել են, բայց թոռանս օգնելուս նպատակի զգացումը ուժ էր տալիս առաջ շարժվելու և յուրաքանչյուր նոր մարտահրավեր հաղթահարելու համար:

- Ո՞ր են էր Ձեր ավարտական աշխատանքի թեման և ի՞նչ եզրակացությունների հանգեցիք:

-Իմ հետազոտական թեզի թեման էր «Ռետտի համախտանիշ ունեցող երեխաների խաղային գործունեության խնդիրների հաղթահարման էրգոթերապևտիկ մոտեցումները»: Թեզի գիտական ղեկավարն էր Զարուհի Վարդանի Հարությունյանը, որն իր բարձր մասնագիտական պատրաստվածությամբ, անսահման համբերությամբ և հոգատար վերաբերմունքով ուղեկցեց ինձ մագիստրոսական թեզի պատրաստման ողջ ընթացքում: Նրա արժեքավոր խորհուրդները, սկզբունքային դիտարկումները և ոգևորող աջակցությունը մեծապես նպաստեցին աշխատանքը գիտական և բարձր մակարդակով կատարելուն: Նրա հավատը իմ կարողությունների նկատմամբ և մշտական աջակցությունը այս երկու տարիների ընթացքում օգնեցին հաղթահարել առաջացած դժվարությունները:

Հետազոտության արդյունքում եկա այն եզրակացության, որ զգայական ինտեգրման վրա հիմնված աշխատանքը, նպատակային և անհատական էրգոթերապևտիկ միջամտությունները կարող են նպաստել Ռետտի համախտանիշ ունեցող երեխաների խաղային գործունեության ակտիվացմանը, խաղի ընթացքում մասնակցության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև հաղորդակցական, զգայական և շարժողական հմտությունների զարգացմանը: Արդյունքները ցույց տվեցին, որ խաղը կարող է ծառայել ոչ միայն որպես ժամանց, այլև որպես կարևոր թերապևտիկ միջոց՝ երեխայի զարգացման և սոցիալական ներառման խթանման համար:

Միաժամանակ ցանկանում եմ ընդգծել, որ իմ մասնագիտական ուղին այս թեզով չի սահմանափակվելու: Աստծո կամքով շարունակելու եմ ձեռք բերել նոր գիտելիքներ, կատարելագործել մասնագիտական հմտություններս և ուսումնասիրել ժամանակակից գիտական ու թերապևտիկ մոտեցումները՝ Ռետտի համախտանիշ ունեցող երեխաների առավել արդյունավետ աջակցման և վերականգնման գործընթացների բարելավման նպատակով: Համոզված եմ, որ շարունակական ուսուցումը, հետազոտական աշխատանքը և մասնագիտական նվիրվածությունը կնպաստեն այս ոլորտում նոր հնարավորությունների բացահայտմանը և երեխաների կյանքի որակի բարելավմանը:

- Որակավորման հանձնաժողովի անդամները Ձեզ միաձայն գնահատեցին 100 միավոր: Դա հաջողությո՞ւն էր Ձեզ համար: Ես ներկա էի պաշտպանությանը և տեսա Ձեր հուզմունքը:

-Իհարկե, 100 միավոր ստանալը հաճելի գնահատական էր ինձ համար, քանի որ այն իմ երկու տարիների հետևողական աշխատանքի և ջանքերի գնահատումն էր: Սակայն, անկեղծ ասած, ո՛չ այդ միավորը, ո՛չ էլ դիպլոմը չեմ համարում իմ կյանքի ամենամեծ հաջողությունը: Ինձ համար հաջողության իրական չափանիշը մարդու թողած դրական հետքն է ուրիշների կյանքում: Ամենամեծ հաջողությունն այն կլինի, երբ կարողանամ իմ ձեռք բերած գիտելիքներով օգնել թոռնուհուս, նպաստել նրա զարգացմանը, ինքնուրույնության բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը: Եթե կարողանամ օգտակար լինել նաև նման դժվարություններ ունեցող մյուս երեխաներին, դա կլինի իմ ամենամեծ ձեռքբերումը:

Եթե այսօր ամփոփեմ անցած ճանապարհս, ապա կասեմ, որ իմ ամենամեծ հաջողությունները կապված են ոչ թե կոչումների կամ գնահատականների, այլ ընտանիքիս, երեխաներիս, թոռներիս, իմ սովորած ու փոխանցած գիտելիքների և մարդկանց կյանքում օգտակար լինելու հնարավորության հետ:

Ուզում եմ անկեղծ ասել, եթե հասել եմ որևէ հաջողության, ապա դա առաջին հերթին Աստծո ողորմությամբ, աջակցությամբ և նախախնամությամբ է:

- Ինչ կուզեիք ասել «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի միջոցով:

-«Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի միջոցով ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել համալսարանի ղեկավարությանը, դասախոսական կազմին և բոլոր այն մարդկանց, որոնք իրենց գիտելիքներով, աջակցությամբ ու նվիրումով նպաստել են իմ մասնագիտական և անձնական կայացմանը: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան տիկին Գոհար Հովյանին՝ աջակցության, արժեքավոր խորհուրդների, վստահության և ոգեշնչման համար: Խորին երախտագիտություն եմ հայտնում նաև իմ թեզի գիտական ղեկավար տիկին Զարուհի Վարդանի Հարությունյանին՝ մասնագիտական ուղղորդման, գիտական խորհրդատվության, համբերատար աշխատանքի և ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար, որոնք մեծապես նպաստել են իմ հետազոտական աշխատանքի հաջող իրականացմանը:

Մաղթում եմ համալսարանին նոր հաջողություններ, գիտակ, պատասխանատու և հայրենասեր մասնագետների պատրաստման շարունակական ձեռքբերումներ: Ուսանողներին ցանկանում եմ նպատակասլացություն, աշխատասիրություն և հավատ սեփական ուժերի նկատմամբ:

Կուզեի նաև ասել, որ մարդը կարող է զարգանալ, սովորել և իր առջև նոր նպատակներ դնել ցանկացած տարիքում: Երբ կա կամք, հավատ և հետևողական աշխատանք, հնարավոր է հաղթահարել դժվարությունները և հասնել ցանկալի արդյունքների: Թող յուրաքանչյուր հաջողություն ծառայի մեր հայրենիքի, կրթության և հասարակության զարգացմանը:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

«ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ ԱՐԴԻ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Հունիսի 12-13-ը Գորիսում տեղի ունեցավ «Ակսել Բակունցը արդի գիտական ընթերցումների մեջ» հանրապետական գիտաժողով՝ նվիրված մեծանուն գրողի ծննդյան 127-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էին «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամը և Ակսել Բակունցի տուն-թանգարանը:

Գիտաժողովին մասնակցում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Բացման խոսքում «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի տնօրեն, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարությանը ուրախությամբ արձանագրեց, որ գիտաժողովը համախմբել է Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության գիտական ու մշակութային հաստատությունների ներկայացուցիչներին, ճանաչված գրականագետների ու գրողների: Գիտաժողովի նպատակն է Բակունցի ստեղծագործական աշխարհի նորովի ուսումնասիրությունը և բակունցագիտության զարգացումը: Խորհրդանշական էր, որ գիտաժողովն անցկացվում էր հենց Գորիսում. «Գորիսը Բակունցի համար պարզապես ծննդավայր չէ, այլ՝ նրա ստեղծագործական աշխարհի, գեղարվեստական մտածողության, բնության, լեզվի և հիշողության ակունքն է, ուստի խոսել Բակունցի մասին նրա հայրենի քաղաքում, նշանակում է ոչ միայն ուսումնասիրել նրա գրականությունը, այլև հաղորդակից լինել այն միջավայրին, որտեղ ձևավորվել է նրա արվեստը»,- նշեց Թ. Մարությանը:

Ողջույնի խոսքերով հանդես եկան նաև Ակսել Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը, Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Տիգրան քահանա Հակոբյանը, Գորիսի նախկին քաղաքապետ, «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Նելսոն Ոսկանյանը, որոնք ընդգծեցին՝ Ակսել Բակունցի ստեղծագործական ժառանգությունը շարունակում է ապրել, հուզել և նոր հարցադրումներ առաջացնել, ուստի նրան նվիրված գիտաժողովները պետք է շարունակական լինեն:

ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի հետ համահեղինակությամբ «Ակսել Բակունցը Սփյուռքի գրապատմական գնահատություններում» զեկուցումը ներկայացրեց նույն ամբիոնի դոցենտ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Քնարիկ Աբրահամյանը՝ հանգամանորեն բացելով Ակսել Բակունցի գրական հայտնությունը Սփյուռքի գրամշակութային աշխարհի համար: Անգամ Խորհրդահայ Հայաստանի հետ սահմանափակ հարաբերությունների պարագայում Սփյուռքում մեծ էր հետաքրքրությունը Բակունցի ստեղծագործության նկատմամբ, ինչի լավագույն վկայությունը Լ. Բաշալյանի, Ա. Չոպանյանի, Շ. Նարդունու, Ա. Դարյանի, Գ. Աճեմյանի, Պ. Սնապյանի՝ սփյուռքահայ մամուլում տպագրված գնահատություններն են: Բակունցագիտության համար հիմնարար նշանակություն ունեցավ Պետրոս Զարոյանի «Բակունց և իր «Սև ցելերի սերմնացանը» հատորը (1935), որը, ըստ էության, արևելահայ արձակագրի մասին առաջին առանձին խոսքն էր: Անդրադարձ կատարվեց նաև Սփյուռքում տարբեր տարիներին լույս ընծայված Բակունցի ստեղծագործություններին, որոնք բակունցագիտության ամբողջացման համար կարևոր նշանակություն ունեն:

Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը հանդես եկավ «Ակսել Բակունցի լեզվի բառապաշարի բառարանագրության հարցերի շուրջ» զեկուցմամբ՝ անդրադառնալով Բակունցի արձակին բնորոշ լեզվական կաղապարներին, դրանց գործածությանը, իմաստային շերտերին: Պրոֆեսորը ցավով նշեց, որ բակունցյան բառապաշարի շատ բառեր դեռևս ընդգրկված չեն հայ բառարաններում, և ապագա հետազոտողլեզվաբանները պետք է զբաղվեն այս ուղղությամբ:

Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը ներկայացրեց «Ակսել Բակունցին նվիրված հուշագրության մարդակենտրոն ուղղությունը» խորագրով զեկուցումը: Ա. Բակունցին հուշագրել են շատերը՝ Գ. Մահարին, Հ. Սահյանը, Ս. Խանզադյանը. Գ. Սարյանը, Վ. Ալազանը, Ռ. Զարյանը, Խ. Կանայանը, Թ. Սաֆրազբեկյանը, նրա դպրոցական ընկեր Ա. Ղուկասյանը և այլք: Ա. Գալստյանն առանձնացրեց նաև Լևոն Սողոմոնյանի «Փախուստ դժոխքից» վեպը: Հուշերում քաղաբերվում են նաև Բակունցի նամակները, երկտողերը, մակագրությունները, որոնք մարդակերտումի դասեր են ներառում:

Բանասիրական ֆակուլտերի փոխդեկան, Վ. Պարիզունու անվան հայ նոր սիրությունը, որտեղ քննում էր 20-րդ դարի արձակի խոշորագույն դեմքերից մեկի՝ նորվեգացի նոբելյան դափնեկիր Քնյութ Համսունի ազդեցությունը Ակսել Բակունցի արձակի վրա: Ակնհայտ է, որ Ք. Համսունի «Պան»-ը վեպը խորքային ազդեցություն է թողել Բակունցի աշխարհայացքի, բնության ընկալման ու պատկերման, բանաստեղծական պատումի և կերպարների հոգեբանության բացահայտման վրա: Երկուսն էլ միանման են զգում կուսական ու վայրի բնությունը, նույնն է նաև տարվա եղանակների նրանց զգացողությունը. թե՛ «Պանը» վեպում, թե՛ Բակունցի «Միրհավ» պատմվածքում ելակետը աշունն է, նույնն է նաև թռչնափետուրի սիմվոլիկան՝ իբրև վերհուշն արթնացող պատկեր: Համսունի արձակից է Բակունցը փոխառել նաև մարդու և բնության ներդաշնակության խաթարման թեման, ինչը տեսնում ենք նրա «Մթնաձորի չարքը», «Ալպիական մանուշակ», «Մթնաձոր» պատմվածքներում:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի օգնական, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Հովհաննես Սարգսյանը հանդես եկավ «Ղևոնդ Ալիշանի «Սիսական» աշխատության տեղանունների զուգահեռումը Ակսել Բակունցի գեղարվեստական արձակում» զեկույցով: Հիմք ընդունելով Ղ. Ալիշանի «Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» (Վենետիկ, 1893) հսկայածավալ աշխատությունը՝ հոդվածագիրը համեմատական աշխատանքի շնորհիվ պարզել էր, որ Բակունցի ստեղծագործություններում հանդիպող բազմաթիվ տեղանուններ՝ Կյորես, Մթնաձոր, Աքարում, Հանավանք, Մրոց, Սաբու, Օրանջիա և այլն, ոչ թե գրողի գեղարվեստական երևակայության արդյունք են, այլ՝ գոյություն ունեցող տեղավայրեր:

Գիտաժողովին զեկույցներով հանդես եկան նաև հանրապետության տարբեր կրթական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ՝ Հայկանուշ Ղազարյանը, Աիդա Մարանջյան-Մարտիրոսյանը, Սվետլանա Մանուչարյանը, Աննա Երկանյանը, Արա Զարգարյանը, Արամ Խաչատրյանը, Արգամ Երանոսյանը, Նաիրա Իսկանդարյանը, Ռոզա Հովհաննիսյանը:

Գիտաժողովի ավարտին զեկուցողները ստացան մասնակցության հավաստագրեր, իսկ օրն ամփոփվեց Ակսել Բակունցի տուն-թանգարանում, որտեղ ավանդական թեյի սեղանի շուրջ ծավալվեցին հետաքրքիր ու շահեկան քննարկումներ Բակունցի ողբերգական ճակատագրի, ստեղծագործական առանձնահատկությունների շուրջ:

Ա. Բակունցի ծննդյան օրը՝ հունիսի 13-ին, գիտաժողովի մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին մեծանուն գրողի հուշարձանին, ապա գրողի տուն-թանգարանում մասնակցեցին նրա 127-ամյակին նվիրված միջոցառմանը: Ելույթներով հանդես եկան պրոֆեսորներ Սուրեն Դանիելյանը, Վազգեն Համբարձումյանը, դոցենտներ Քնարիկ Աբրահամյանը և Նաիրա Խաչատրյանը:

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՉՈՐՍ ՏԱՐԻ՝ ԳԻՏԵԼԻՔԻ, ՓՈՐՁԻ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Չորս տարի առաջ համալսարանի շեմը հատելով՝ ես սկսեցի մի ճանապարհ, որը լի էր նոր բացահայտումներով, ձեռքբերումներով և կարևոր դասերով: Այս տարիները միայն մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու ժամանակահատված չէին, այլև ինքնաճանաչման, արժեքների ձևավորման և կյանքի նկատմամբ նոր հայացք ձևավորելու շրջան: Ուսանողական կյանքը բազմազան էր ու հետաքրքիր: Դասախոսություններից և քննություններից զատ՝ մեծ դեր ունեցավ նաև ուսանողական խորհրդի գործունեությունը, որը հնարավորություն տվեց ավելի ակտիվ ներգրավվել համալսարանական կյանքին, մասնակցել տարբեր միջոցառումների կազմակերպմանը և ձեռք բերել թիմային աշխատանքի կարևոր հմտություններ: Ուսանողական խորհուրդը դարձավ այն հարթակը, որտեղ ուսանողները կարողանում էին արտահայտել իրենց նախաձեռնությունները, զարգացնել կազմակերպչական կարողությունները և ավելի սերտ կապ հաստատել համալսարանական համայնքի հետ:

Առանձնահատուկ երախտագիտության են արժանի մեր դասախոսները, որոնք ոչ միայն փոխանցեցին մասնագիտական գիտելիքներ, այլև եղան խորհրդատու, ուղեկից և օրինակ: Նրանց նվիրված աշխատանքի շնորհիվ մենք սովորեցինք ոչ միայն մեր մասնագիտության գաղտնիքները, այլև պատասխանատվության, աշխատասիրության և մարդկային բարձր արժեքների կարևորությունը:

Այսօր, ավարտելով ուսանողական կյանքի կարևոր փուլը, վստահությամբ եմ նայում ապագային: Շուտով կսկսեմ իմ մասնագիտական ուղին որպես ուսուցիչ՝ փորձելով աշակերտներիս փոխանցել այն գիտելիքներն ու արժեքները, որոնք ստացել եմ համալսարանում: Համոզված եմ, որ ուսուցչի աշխատանքը պարզապես մասնագիտություն չէ, այլ պատասխանատու առաքելություն, որը հնարավորություն է տալիս ձևավորել ապագա սերունդների մտածողությունն ու աշխարհայացքը: Համալսարանական տարիները կմնան իմ կյանքի ամենահիշարժան ու արժեքավոր էջերից մեկը՝ լի ջերմ հիշողություններով, ընկերներով, ուսուցիչներով և անգնահատելի փորձառությամբ, որոնց համար մնում է միայն շնորհակալություն հայտնել իմ հարազատ համալսարանին և բոլոր նրանց, ովքեր այս չորս տարիների ընթացքում եղել են իմ կրթական ու մարդկային աճի ուղեկիցները:

Աննա Դավթյան
Բանասիրական ֆակուլտետ,
4-րդ կուրս

ՔՆՆԱՀՐՁԱՆԻՑ ՀԵՏՈ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. Սոցիալական հոգեբանություն - ԺԹ.00.03 /2 տեղ/

2. Զարգացման և կրթության հոգեբանություն - ԺԹ.00.05 /1 տեղ/

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում հաստատության ղեկավարի անունով,

2. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

3. Օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ)՝
անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 2.5՝ նոր գնահատման համակարգով և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,
ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,
գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:

4. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

5. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

6. Ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

7. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. հունիսի 15-ից մինչև հուլիսի 10-ը:

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են **ս.թ. հուլիսի 13-ից մինչև 22-ը:**

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ